Երևանի քաղաքապետին

ՀՀ քաղաքացի Ռուբեն Նորայրի Մելիքյանից

ԻՐԱԶԵԿՈՒՄ

Իրազեկում եմ 2026թ. դեկտեմբերի 12-ին՝ ժամը 13:00-ից մինչև 15:00-ն Երևան քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր տաճարի (հասցե՝ Երվանդ Քոչարի փողոց 5) հարակից տարածքում՝ դիմացի հարթակին և դեպի Տիգրան Մեծի պողոտա ձգվող աստիճանահարթակին հավաք անցկացնելու վերաբերյալ:

Հավաքի նպատակն է քաղբանտարկյալների և քաղաքական հետապնդման ենթարկվող այլ անձանց իրավունքների բարձրաձայնումը:

Հավաքի ընթացքում օգտագործվելու են բեմ, ձայնային ուժեղացման սարքեր (բարձրախոսներ), մոմավառության շարժական հարթակներ, հոսանքի գեներատոր, պաստառներ:

Մասնակիցների սպասվող թիվը՝ 500 հոգի: Կարգադրիչների նախատեսվող թիվը՝ 10 հոգի:

Առդիր՝ նույնականացման քարտիս պատճենը:

Դիմող՝ /Ռուբեն Մելիքյան/

27.11.2026թ.